Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

Էլեկտրական ցանցին նոր սպառողի միացման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման և միացման ժամկետների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով նախատեսվում է կատարել 2017 թվականի տարեկան և 2018 թվականի 2-րդ եռամսյակի արդյունքներով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ցուցանիշների ուսումնասիրություն, համապատասխան վերլուծական տեղեկանքի կազմում և հրապարակում հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախատեսվում է հավանություն տալ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի նոր կառուցվածքի և էլեկտրական էներգիայի առևտրի մեխանիզմների հայեցակարգին, որը նախադրյալներ կստեղծի էլեկտրաէներգետիկական մրցունակ շուկային աստիճանաբար անցման՝ ինչպես շուկայի մեծածախ, այնպես էլ մանրածախ հատվածում:

Սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի գնահատման, անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու նպատակով նախատեսվում է իրականացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2017 թվականին կատարված

ներդրումների փաստացի ծավալների ուսումնասիրություն, արդյունքների ամփոփում և հրապարակում հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախատեսվում է մշակել բաշխման ցանցին արտադրող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրական էներգիայի առաքման և էլեկտրական էներգիայի առուվաճառքի (օրենքով գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորությամբ կայանում էլեկտրական էներգիա արտադրող-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևը:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ նախատեսվում է ներկայացնել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2019 թվականի անվանական կազմի և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան մեծությունների կանխատեսումները:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը կմշակվի ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի գործունեության ծրագիրը և կներկայացվի ՀՀ Ազգային ժողով:

Նախատեսվում է մշակել վերլուծական տեղեկանք Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի ապահովման աշխատանքների իրականացման վերաբերյալ, որն ուղղված է ՀՀ տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի գնահատմանն ու շարժական կապի ցանցերի և ծածկույթների շարունակական արդիականացմանը:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,

- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: